ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հոկտեմբերի 2024 թվականի № 398-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի № 1 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» № 355-Ա որոշման № 2 հավելվածի 6-րդ կետում ***«Աննա Մնացականյան»*** բառերը փոխարինել ***«Արմինե Կարագույան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2024 թվականի հոկտեմբերի 8
ք. Հրազդան